ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև Եվրասիական զարգացման բանկի վճարված կանոնադրական կապիտալում Ռուսաստանի Դաշնության մասնաբաժնի մասի առուվաճառքի մասին» համաձայնագրի վավերացման նպատակահարմարության վերաբերյալ

Եվրասիական զարգացման բանկի կանոնադրական կապիտալը կազմում է 7 մլրդ ԱՄՆ դոլար, որից վճարված կապիտալը՝ 1.5 մլրդ, ցպահանջ՝ 5.5 մլրդ ԱՄՆ դոլար:

Հայաստանի Հանրապետությունը Եվրասիական զարգացման բանկի լիիրավ անդամ է դարձել 2009 թվականի ապրիլին: Հայաստանի ներդրումը բանկի կապիտալում կազմում է 100 հազար ԱՄՆ դոլար: ՀՀ մասնաբաժինը կազմում է 0,007%: Կանոնադրական կապիտալի յուրաքանչյուր բաժնետոմսի արժեքը կազմում է 1000 ԱՄՆ դոլար, և յուրաքանչյուր վճարված բաժնետոմսը համապատասխանում է մեկ ձայնի:

Ներկայումս ԵԱԶԲ-ի ներդրումային պորտֆելի ծավալը, հաշվի առնելով իրականացված ծրագրերը, կազմում է 13,4 մլրդ ԱՄՆ դոլար, որից 484,2 մլն ԱՄՆ դոլարը 23 նախագծերի շրջանակներում տրամադրվել է ՀՀ-ին:

Բանկի կանոնադրական կապիտալը (հզ. ԱՄՆ դոլար)

Մասնակից-պետությունը	**Կանոնադրական կապիտալ**	**Ցպահանջ կապիտալ**	**Վճարված կապիտալ**
Ռուսաստան	*4 617 993*	*(3 617 993)*	*1 000 000*
Ղազախստան	*2 309 271*	*(1 809 271)*	*500 000*
Բելառուս	*69 295*	*(54 295)*	*15 000*
Տաջիկստան	*2 145*	*(1 645)*	*500*
ՀԱՅԱՍՏԱՆ	***648***	***(548)***	***100***
Ղրղզստան	*648*	*(548)*	*100*
ԸՆԴԱՄԵՆԸ	*7 000 000*	*5 484 300*	*1 515 700*

«Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև Եվրասիական զարգացման բանկի վճարված կանոնադրական կապիտալում Ռուսաստանի Դաշնության մասնաբաժնի մասի առուվաճառքի մասին» համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) նպատակ ունի կարգավորելու ԵԱԶԲ-ի կապիտալում ՌԴ մասնաբաժնի վերաբաշխման հետ կապված իրավահարաբերությունները:

ՀՀ կողմից 64 մլն ԱՄՆ դոլար արժողությամբ 64 000 բաժնետոմս գնելուց հետո ՀՀ մասնաբաժինը կկազմի 4,22 %:

Հաշվի առնելով վերը շարադրվածը՝ Համաձայնագրի վավերացումը համարում ենք նպատակահարմար:

Ֆինանսների նախարարություն